օրինակներ և դասերի ու նրա ողբերգական մահուան յիշատակը փայլուն էջերով կարձանագրվի մեր երկրի պատմութեան մէջ։ Զորրորդ անգամ ժողովրդից ընտրված վարչական անձին, որ սահմանադրութեան համեմատ պարտաւոր է նախագահի ազատ պաշտօնը ընդունել, վիճակվում է այդ տեղը բռնել։ Մեր խելացի օրէնքները նախատեսել են ամենատարբերելի պատահարներ, և միջոցներ են գործ դրել, որ մարդկային կեանքի անհաստատութիւնը չը կարողանայ վնասել կառավարութեան գործողութիւններին։ Մարդիկ մեռնում են, բայց մեր ազատ հիմնարկութիւնների սկզբունքները յաւիտեան ապրում են։ Մեր ժողովրդական կառավարութեան հաստատութեան համար ի՞նչ հարկաւոր է մի այլ զօրեղ և ազդու ապացոյց, քան թէ այն, որ նախագահի մահուանից յետոյ նրա սահմանադրական ժառանգը առնում է իր ձեռքը իշխանութիւնը առանց խանգարելու կարգապահութիւնը և հանգստութիւնը, եթէ չը խօսենք այն ցաւի մասին, որ պատճառեց մեզ ամենքիս այդ դժբաղդութիւնը։ Իմ յարգելի նախորդի բոլոր ազնիւ յատկութիւնները, բոլոր միջոցները, որոնց նա զարգացրեց չարիքները արմատախիլ անելու, հասարակական բարօրութիւնը բարձրացնելու, ներքին հանգստութիւնը ապահովելու և մեր բարեկամական յարաբերութիւնները օտար պետութիւնների հետ հաստատելու համար, կը դիշխեն ժողովրդի սրտերում, իսկ ինձ համար օրինակներ կը լինեն, որոնց ես կաշխատեմ երկրի համար օգտակար դարձնել։ Մեր հայրենիքը բարօրութիւն է վայելում։ Մեր ֆինանսական քաղաքականութիւնը օրէնքով որոշված է և հաստատ հիմունքներ ունի։ Ոչինչ դժուարութիւններ չեն սպառնում մեր արտաքին յարաբերութիւններին և մենք համարձակ կարող ենք յուսալ, որ մեր ժողովրդի ազնուութիւնը, խելացիութիւնը և սնահաստութիւնը կը պահպանեն կրկրի այժմեան խաղաղ և կանոնաւոր զարգացումը։ Մեր երկրին վիճակված վշից յետոյ մենք աւելի էլ գնահատում ենք հանգստութիւնը։ Ուրեմն մենք չենք շտապի անհաստատ օրէնսդրական միջոցներ ընդունել և կօնգրեսի վաղաժամ գումարումը աւելորդ ենք համարում։ Մեր սահմանադրութիւնը պարզ որոշել է կառավարող և օրէնսդրական իշխանութիւնների իրաւունքները և նախագահը գիտէ, որ խելացի կերպով պէտք է օգուտ քաղէ այդ իրաւունքներից։ Շատ լաւ հասկանալով իմ մեծ պատասխանատուութիւնը, ես ընդունում եմ սահմանադրութիւնից որոշած իմ պարտականութիւնը, յուսալով Աստուծու օգնութեան և ամերիկական ժողովրդի խելքի, հայրենասիրութեան և բարոյականութեան վրա։"

Այդ ճառը շատ լաւ ազդեցութիւն գործեց ամենքի վրա, իսկ մինիստրախնամակալ Բլեն սեղմեց Արտերի ձեռքը։ Արտեր հրաւիրեց բոլոր մինիստրներին մնալ իրանց պաշտօնների մէջ և յետաձգեց ամեն տեսակ քաղաքական խորհրդակցութիւնները մինչև Գարֆիլդի թաղումը։ Նոր նախագահի առաջին կարգադրութիւնը այն եղաւ, որ Գարֆիլդի թաղման օրը նա նշանակեց աղօթքի և ապաշխարութեան օր ամբողջ երկրի համար։

ՆԱՄԱԿ ԹԻՐԳԻԱՑԻՑ

Կ. Գօրիս, 15 սեպտեմբեր

Զարմանալի բնութեան մը տէր է այս տեղի հայ ժողովուրդը։ Ազգային ինքնոյց մասին։ Սա այնքան զգայուն դարձած է մէկ քանի տասնեակ տարիներ վերջ, այսինքն քանի հայկական հարցը երևան եկած է, որ եթէ երկու օր անոր վրայ չը խօսվի կը ջլատի, կը յուսահատի, վիրը կը ծռէ և եթէ չամաչէ պիտի լայ անգամ։ Ընդհակառակը երբ կիմանայ թէ իր խնդրի մասին մէկ դեսպան խօսք ըրած է կամ մէկ գիր ուղղած է Բ. Դրան կամ եւրոպական թերթ մը նպաստաւոր յօդուած մ'է գրեր, շուտով վեր կը թռի, երեխայի նման ծափ կը զարնէ, խնդակցութիւն կը յայտնէ ընկերին, իբր թէ ալ ամեն բան որոշուեր, լմնցեր է և Հայաստանը վերակենդանացեր է բոլորովին։

Մինչ այդանելի բան չէ այդ, վասն զի անոր պատճառները դիւրաւ հասկանալի են։ Նախ՝ որ մենք քաղաքական կեանքին անտարբ ենք դեռ և երկրորդ՝ որ մեր թշուառութիւններն այնքան անհանդուրժելի են, որ մեր վիճակին դարմանին կարելիութեանը վրա միշտ կը տարակուսինք։ Պէտք չէ սակայն մոռնալ որ Հայաստանի բարեկեցիկ զարգացումն այն ասոնցմանց անհրաժեշտ են, այնքան անխուսափելի եղած են այլոց միջամտութիւնը և այնքան պարագայներուն բերումը զայն պիտի իրացնէ, որ անհնարին մէկ բան է այն խնդրոյն յաջողագէս չը լուծուիլը։ Հարցը ուրեմն մէկ օր յառաջ կամ մէկ օր վերջը կատարուելուն վրա է և այն ալ ամբողջ Եւրոպիոյ տրամադրութենէն կախեալ ըլլալով, ոչ սատիկ տրամութիւն պէտք է զգանք երբ մեր անուանը պահ մը չենք լիշեր և ոչ անմիջական լուծում մը յոյս ընելով անուանձ ուրախութեան ցոյցեր պէտք է տանք։

Մինչև հիմայ այս խնդրով ամենէն աւելի ըլլաղողը կրնանք ըսել թէ Անգլիոյ դեսպանն է։ Բայց վստահութեամբ գիտենք որ հաւատարիմ ան բանակցութիւնները այսօր միայն կրկրսին Բ. Դրան հետ։ Մինչև հիմայ եղածներն պատրաստական խորհրդակցութիւններ միայն կը համարուին երբեմն ընդհատուած, իսկ այսօր սկսուած լուրջ բանակցութիւններն տեղական հանգամանքէ զուրկ չեն կարող ըլլալ և ասոնք պիտի եզրակացնեն խնդիրը։

Բանակցութեանց բուսական ժամանակ տեսնելն նոյն իսկ Անգլիոյ դեսպանին կատարեալ է կերեայ, վասն զի լորդ Դիւֆերէն քիչ օր կայ առաջարկեց Բ. Դրան, որ 61-րդ յօդուածին տրամադրութիւնները ամբողջապէս ի գործ չը դրուած, առ այժմ մի թուրք կոմիսէր խրկեն լիազօր իշխանութեամբ, որպէս զի երթայ հայաբնակ գաւառներն և խիստ տեղական բարեկարգութիւններն ընէ։ Լորդ Դիւֆերէն առաջարկեց նաև որ այդ կոմիսէրին ընտրութիւնն իրեն թողուի։

Զենք յուսար թէ ազնիւ լորդը այնքան միամիտ ըլլայ որ չը գիտենայ թէ ինչ օգուտ կարելի է ստանալ այսպիսի մէկ պաշտօնեայէ։ Թող անոր ընտրութիւնը ինքն ընէ չէ որ մէկ մուսուլման պիտի ըլլայ այդ մարդը և ինչպէս վստահութիւն կարելի է ընել անոր երբ այսքան կոմիսէրներն դացին արդէն և մէկ մէկ տեղեկագիր խմբագրելով եւ դարձան։ Եւ դարձեալ այդ մարդը իր աչքին առաջը չէ՞ որ պիտի ուներայ Ապեսին փաշայի օրինակը. որ Տիարպէքիրի կոզմերը գնաց, փոքր ինչ արդարութեամբ վարվեցաւ, մէկ քանի քիւրդ պէյեր աքսորեց և գաւառաններն կարգի դնել ուզեց։ Ի՞նչ եղաւ անոր ըրածներուն հետևանքը։ Այն որ հարատաւոր հարաբերութիւնները ուսուցին այն կոզմերը՝ այն է որ քիւրդ պէյերը որ այստեղ բանտարկեալ էին, իրրև անմեղ արձակուեցան, իսկ Ապեսին փաշան այնքան պատիւ ստանալէն վերջը՝ այսօր գինքը դատաստանի կուզեն ենթարկել իրրև թէ անիրաւութիւններ գործած ըլլայ։

Այս կոմիսէրի առաջարկութիւնը տակաւին Բ. Դուռը չէ ընդունած, բայց հաւանական է որ պիտի ընդունի, մանաւանդ ինչպէս նկատեցի առաջարկեր է. մէկ երկրորդ հայ կոմիսէր չը դնեն անոր քով։ Լորդ Դիւֆերէնի այս գաղափարը ամենուն ձախող կը թուի, վասն զի ոչ միայն հետևանքը դարձեալ ոչինչ պիտի ըլլայ, այլ և անոր ի ցոյցս կատարած բարենորոգման այս բաները թիւրք կառավարութիւնը գոհացուցիչ պիտի համարէ։ Բ. Դրան միշտ մինուառածը ժամանակ չտնել է։ Պէտք է որ դեսպան մը անոր այդ միտումը գիւրացնէ։

Կը լսենք տակաւին որ միւս դեսպանները համամիտ չեն եղեր այդ առաջամանակեայ կոմիսէրութեան գաղափարին և այսօր բանակցութեանց սկսելով թոյլ չը պիտի տան Բ. Դրան որ և է պատրուակաւ յապաղել 61-րդ յօդուածին անթերի գործադրութիւնն։

Ե. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Temps» լրագիրը հաղորդում է սեպտեմբերի 29-ից, որ Պարսաբուրգը Ֆրանսիայի հետ միացնելու երկու հարիւրամեայ տարեդարձի նախընթաց օրը, Պարսաբուրգ քաղաքի արձանի վրա, որ գտնվում է Համաձայնութեան հրապարակի վրա, դրեցին երկու ամագին պսակներ։ Այդ պսակներից մինը, սպիտակ և սև մարգարիտներով հետևեալ վերնագիրն ունի։ «Էլզաս-Լոտարինգեան փարիզի ընկերութիւնները Պարսաբուրգ քաղաքին, 1881 թ. սեպտեմբերի 28-ին»։ Միւս պսակը, ծաղիկներից շինված այս վերնագիրն է կրում։ «Էլզաս-Լոտարինգեան ամսագիր»։

—«Times» լրագրին Փարիզից հեռագրում են, սեպտեմբերի 27-ից, որ, ինչպէս լսվում է, պատրաստ թոյլ տուեց Ֆրանսիայի մէջ արգելված կրօնական օրդէնների անդամներին հագնել աշխարհական հագուստ և մինչև անդամ աշխարհական շորը և լիազօրութիւն տուեց Ֆրանսիական եպիսկոպոսներին նշանակել նրանց ծխատէր քահանաներ։ Եթէ այդ լուրը ուղիղ է, ուրեմն դա ապացուցանում է, որ պապը հաշտվել է կրօնական օրդէնները ջնջելու մտքի հետ Ֆրանսիայում և անյուսալի է համարում վերականգնել նրանց։

—Լրագիրները հաղորդում են, որ Գերմանիայում գետնի տակ հեռագրական թելի անցկացնելը վերջացած է։ Այդ թելը կապում է մինչև 221 քաղաք և տարածվում է Կեոնիգսբերգից մինչև Պարսաբուրգ, Բրէսլավլից մինչև Լմգէն և Ցօրնից մինչև Պախէն։ Հեռագրական բոլոր թելը անցկացնելու համար 58 ամիսներ հարկաւորվեցան և այդ բոլորը կառավարութեանը 30,200,000 մարկ նստեց։

—Կիսապաշտօնական «Fremdenblatt» լրագիրը պատասխանելով «Italie» լրագրի մէկ յօդուածին, որի մէջ ասված է եղել, թէ պապը տրամադիր է իր աթոռը Հռոմից Վիէննա տեղափոխել, ասում է հետևեալը։ «Յուսով ենք, որ Լեոն XIII-ը ծանր մտածելուց յետոյ, կը վճռի Հռոմում մնալ։ Իսկ եթէ նա անպատճառ մտադիր է Վատիկանը թողնել, այն ժամանակ մենք խորհուրդ կը տանք չտա չը հաւատալ Աստուրիայում իրան տպասելի համակրանքին. ճիշդ է, որ մենք սուրբ հօրը կը հիւրասիրենք, բայց կայսրութեան քաղաքական շահերը չեին թոյլ տայ մեզ սուրբ աթոռի պահանջները այն եռանդով պաշտպանել, որը պահանջում են Լեոն XIII-ը և նրա խորհրդատուները։»

—Իրլանդիայի կաթոլիկ եպիսկոպոսների ժողովը, որ սեպտեմբերի 28-ին կայացաւ Դուբլինում, կայացրեց հետևեալ վճիռները, որոնց մէջ խորհուրդ է տրվում ֆէրմէրներին օգուտ քաղել կարուածական նոր օրէնքի վճիռներից և գաղանի ընկերութիւններին չը մասնակցել։ Վերջը եպիսկոպոսները այն միտքն են յայտնում, որ կառավարութիւնը շատ խելացի կերպով վարված կը լինի, եթէ ազատ քաղաքական բանտարկվածներին։

—«Բէյսերի ընկերութեանը», սեպտեմբերի 26-ից Բարցելոնայից հաղորդում են, որ այդ օրը այնտեղ բանտարկվեցան սոցիալիստների կօնգրէսի նախագահը և քարտուղարը, որոնք, նախընթաց օրը կայացած կոնգրէսի նստին ցուցումներ արին, որոնց մէջ քաջալերում էին նիհիլիստների գործերը։

—«Daily News» լրագրի Վաշինգտոնի թղթակցի խօսքերով Գիտօ յոյս ունի արդարանալ այն հիման վրա, որ իբր թէ չէ կարելի ապացուցանել, թէ ինքն չարամտութեամբ է սպանել նախագահ Գարֆիլդին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 սեպտեմբերի։ «Правит. Вѣст.» լրագիրը հաղորդում է, որ Ֆինանսների մինիստրի տանը պետական կայքերի և Ֆինանսների մինիստրների ներկայութեամբ գեմատվոների էկսպերտների խորհուրդը բացվեց ներքին գործերի մինիստրի ճառով, որի սկզբում մինիստրը ասաց, թէ կայսրի ցանկութեան համեմատ ներկայ տարվայ ընթացքում այս երկրորդ անգամ հրաւիրվում են գեմատվոներից տեղական անձինք, որպէս զի երկրի կենսական հարցերը չը վճռվեն առանց մասնակցութեան տեղական գործիչների, որոնք լաւ ծանօթ են գործերի իսկական դրութեան հետ։ Այնուհետև երկու հարցերի նշանակութեան վրա մատնացոյց անելով, մինիստրը ասաց. Զեզանից ներանք, որոնք առաջին անգամ չեն հրաւիրված, ամենից լաւ կը մեկնեն, որ դուք հարկաւորութիւն չունէք դժուարանալ ձեր կարծիքները կատարեալ ազատութեամբ արտայայտելու համար։ Այնուհետև պարտականութիւնների կարգը ցոյց տալուց յետոյ մինիստրը ասաց. Ձեր աշխատանքների վերջանալուց յետոյ մինիստրների ընդհանուր նիստ կը նշանակվի և ես կը հաղորդեմ ձեզ մեր հայեացքը, թէ ձեր առաջարկութիւններից որոնք են յարմար և որոնք են անյարմար և այնուհետև մենք նորից միասին կը քննենք հարցը և մեր եզրակացութիւնը կը ներկայացնենք Պետական խորհրդին և Թագաւորին։ Թող մեր աշխատանքները ծառայեն մեր թանգագին Հաստատանի օգտին։ Պետական կայքերի և Ֆինանսների մինիստրների ճառերից յետոյ մինիստրները հեռացան։ Էկսպերտների ժողովը իր ամենաաւագ անդամ Գորչակովի նախագահութեամբ վճռեց երկու հարցերն էլ էական կողմից բոլոր անդամների մասնակցութեամբ քննել։ Ժողովը նախագահ ընտրեց իշխան Ա. Ա. Շչերբատովին, իսկ նրան օգնական Ն. Ա. Վագանովին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 սեպտեմբերի։ Էկսպերտների խորհրդի սեպտեմբերի 24-ի, 25-ի և 26-ի նիստերի ընթացքում միայն երկու հարցեր են վճռված. խմիչքների հասարակական հիմնարկութիւնների կազմակերպութիւնը և նրանց թէ ի՞նչ սահմանափակումը։ Երկու հարցերն էլ դրականապէս են վճռված։ „Новое Время" լրագիրը հաղորդում է. Այսօր ուղևորվում է Վարշավա օրեր-պրօկուրոր Գորչակովը. այսօր ապատում են դեսպան Օրլովին։

ՐԻԳԻՆՍԿ, 26 սեպտեմբերի։ Այսօր բացվեցաւ նաւահանգիստը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 սեպտեմբերի։ „Порядокъ" լրագիրը հաղորդում է. „Կարմիր խաչի" ընկերութիւնը մտադիր է հրաժարվել օգնութիւն հասցնելուց հասարակական դժբաղդութիւնների ժամանակ։ „Правит. Вѣстн." լրագիրը հաղորդում է. Բարձրացրին հրամայված է. պետական բանկի 5% նոր տոմսակներ հրատարակել։ Սկզբնական դրամագլուխը 100 միլիոն բուբլ է։ Այդ տոմսակները պետական բանկի 5% առաջին շրջանի տոմսակների իրաւունքները և արտօնութիւնները կունենան։ Սեպտեմբերի 28-ից պետական բանկի մէջ, նրա գրասենեակներում և բաժիններում կըսկսվի տոմսագրութիւն. 100 բուբլու տոմսակին 92 ր. 25 կ. պէտք է տրվի։ Կարելի է ստանալ 100 ր., 500 ր., 1000 ր. և 5000 բուբլու տոմսակներ։ Վճարումը կը կատարվի եօթ անգամ, վերջին անգամը եկող տարվայ ապրիլին կը լինի։ Սեպտեմբերի 15-ին տուած հրամանի համեմատ թիֆլիսի գինուորական գիմնազիայի մէջ 225-ի տեղ պէտք է 275 գիշերօթիկներ պահել։ Սեպտեմբերի 23-ին տուած հրամանով գընդապետ Կուլբերգին շնորհված է Վլադիմիրի շքանշանը երրորդ կարգի։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ